Հաստատված է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության

10.04.2023թ.
թիվ 68/01-10.04.23 որոշմամբ

Վարչության նախագահ

---------- Ա.Խաչատրյան

Հրապարակման ամսաթիվը «17» «04» 2023 թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասների համար՝
Հեռախոս - (37410)8686, (37410)51-09-10 (9104) - Բանկի տեղեկատու

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշիվների բացման, սպասարկման և այլ ծառայությունների

ԵՐԵՎԱՆ 2023

Անվանումը-<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ>> ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե - Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1
Էլեկտրոնային հասցե - bank@aeb.am
Կայք - www.aeb.am
Հեռախոս - (37410)8686, (37410)510-910 (9104)

Հաշիվների բացման, սպասարկման և այլ ծառայությունների տեղեկատվական ամփոփագիր

I. ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ԿՈՄԻՍԻՈՆ ՎՃԱՐ
1. Բանկային հաշվի բացում[1]	
ա/ Ֆիզիկական անձանց համար	5 000 դրամ
բ/ Իրավաբանական անձանց համար (այդ թվում անհատ ձեռնարկատերերի)	10 000 դրամ
գ/Լրացուցիչ հաշիվների բացում	3 000 դրամ
2. Հաշվի սպասարկում, փակում	0

3. Հաշվով գործարքներ չիրականացված հաշվի սպասարկում[2]	
ա/ չեն կատարվել գործարքներ 365- ից 730 օր	10 000 դրամ ամսական
բ/ չեն կատարվել գործարքներ 731- օրից մինչև 1095 օր	15 000 դրամ ամսական
գ/ չեն կատարվել գործարքներ 1096 օր և ավելի	20 000 դրամ ամսական
4. Հաշվից քաղվածքների, վճարային փաստաթղթերի, SWIFT հաղորդագրությունների[4.2] **պատճենների և/կամ կրկնօրինակների, այլ տեղեկությունների և տեղեկանքների**[4.1] **տրամադրում՝ Ըստ վաղեմության ժամկետների**[5]	
4.1 Ֆիզիկական անձանց համար	
ա/քաղվածքների տրամադրում [3], մինչև 1 ամիս կատարված վճարային փաստաթղթերի կրկնօրինակների տրամադրում[6]	0
բ/ 1 ամսից ավել կատարված գործարքների վճարային փաստաթղթերի կրկնօրինակների տրամադրում*	1000 դրամ
գ/ SWIFT հաղորդագրությունների պատճենների և/կամ կրկնօրինակների տրամադրում*	1000 դրամ
4.2 Իրավաբանական անձանց, ԱՁ-ի համար	
ա/ Մինչև 1 ամիս կատարված գործարքների համար	
1. Վճարային փաստաթղթերի, հաշվից քաղվածքների տրամադրում[6]	0
2. SWIFT հաղորդագրությունների պատճենների և/կամ կրկնօրինակների, այլ տեղեկությունների և տեղեկանքների տրամադրում*	1 000 դրամ
բ/ 1-ից մինչև 3 ամիս կատարված գործարքների համար*	1 500 դրամ

գ/ 3-ից մինչև 1 տարի կատարված գործարքների համար*	2 500 դրամ
դ/ 1 տարուց ավել կատարված գործարքների համար*	5000 դրամ
5. Ֆիզիկական անձանց տրամադրվող տեղեկանքներ *	5 000 դրամ
5.1 Ֆիզիկական անձանց տրամադրվող հիփոթեքային վարկերի վճարված տոկոսագումարների գծով ՀՀ ՊԵԿ ներկայացվող եռամսյակային տեղեկանքներ[4.1]	1000 դրամ
6. Հաշվի տնօրինման հանձնարարական[7]	5 000 դրամ ամսական
6.1 Կոմունալ վարձավճարների գծով	0
8. Դրամական չեկային գրքույկների տրամադրում* [8]	5 000 ՀՀ դրամ
9. Հաշիվների վերաբերյալ աուդիտորական հարցումների պատասխան*	15 000 ՀՀ դրամ
10. Հաճախորդի կողմից կատարված գործառնությունների մասին հարցումներ*[9]	
ա/ ՀՀ դրամ, ՌԴ ռուբլի	3 000ՀՀ դրամ
բ/ Այլ արտարժույթ	30.000 ՀՀ դրամ
11. «VIP» սրահում հաճախորդների սպասարկում [10]	20 000 ՀՀ դրամ ամսական
12. Ֆիզիկական անձանց /այդ թվում ԱՁ/կողմից <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ում բանկային հաշվի, քարտային հաշվի, ժամկետային ավանդի, վարկային հաշվի, արժեթղթերի հաշվի և պահատեղի սպասարկման համար լիազարագրերի տրամադրում. *[11]	3 000 ՀՀ դրամ
13. ՀՀ պետական ռեգիստրից էլեկտրոնային հարցում*	3 000 ՀՀ դրամ /յուրաքանչյուր հարցման համար/
14. Հաճախորդի կողմից ծանուցման եղանակը SMS-ով ընտրելու դեպքում 1sms-ի արժեքը,/Գործարքների տեղեկացում SMS-ով,1-sms/	
ա/իրավաբանական անձանց համար /այդ թվում ԱՁ/	10 ՀՀ դրամ
բ/ ֆիզ. անձանց համար	20 ՀՀ դրամ

*Սակագինը ներառում է ԱԱՀ-ն

1. ա/ Հայաստանի Հանրապետության կենսաթոշակառու հանդիսացող ռեզիդենտ ֆիզիկական անձանց, շահույթ չհետապնդող կազմակերպությունների, պետական, պետական ոչ առևտրային, համայնքային ոչ առևտրային և հասարակական կազմակերպությունների, «Էսքրոու», առարկայազուրկ մետաղական, սոցիալական փաթեթի, պետական աջակցության, պետական նպաստի, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ համակարգում ԱՍԿ-ների սպասարկման նպատակով բացվող հաշիվների (այդ թվում լրացուցիչ) համար՝ անվճար, բացառությամբ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի (համատիրության) անվամբ բացվող հաշիվների, որոնց համար սահմանվում են հետևյալ սակագները՝

- հաշվի բացում-5000 ՀՀ դրամ
- լրացուցիչ հաշվի բացում (յուրաքանչյուրի համար)-1000 ՀՀ դրամ:

բ/Լրացուցիչ հաշվի բացման սակագինը գանձվում է հաշիվ ունեցող հաճախորդի (ֆիզիկական և/կամ իրավաբանական անձ)(այդ թվում անհատ ձեռնարկատեր)) կողմից նոր հաշվի /հաշիվների/ բացման համար յուրաքանչյուր անգամ դիմում ներկայացնելուց: Եթե հաճախորդը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ որևէ կառուցվածքային ստորաբաժանումում ունի բանկային հաշիվ, ապա ցանկացած կառուցվածքային ստորաբաժանումում բացվող նոր հաշիվը /հաշիվները/ համարվում է լրացուցիչ:
գ/Հաշվի բացում.
* այլ երկրների /ոչ ՀՀ/ անձը հաստատող փաստաթուղթ ներկայացրած ֆիզիկական անձնաց համար՝ 50000 ՀՀ դրամ.
* 1) ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, 2) ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերի, 3) ռեզիդենտ իրավաբանական անձանց, ում մասնակիցների/բաժնետերերի կազմում 50 տոկոսից ավելին այլ երկրների /ոչ ՀՀ/ անձը հաստատող փաստաթղթով ֆիզիկական անձ/անձինք կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ/անձինք են, 3) ՀՀ-ում գրանցված, սակայն /ոչ ՀՀ/ անձը հաստատող փաստաթղթով անհատ ձեռնարկատերերի համար՝ 70000 ՀՀ դրամ:
Սույն սակագինը չի տարածվում լրացուցիչ հաշիվներ բացելու վրա:

2 ա/ 365 օրից, 731 օրից և 1096 օրից ավել գործառնություն չիրականացված հաշվի մնացորդը համապատասխանաբար 10 000 ՀՀ դրամին, 15 000 ՀՀ դրամին և 20 000 ՀՀ դրամին և/կամ համարժեք արտարժույթին հավասարվելուն և/կամ պակաս լինելուն պես՝ գանձելով միջնորդավճարը, ավտոմատ կերպով փակվում է տվյալ հաշիվը և դադարեցվում է հետագա ամիսների սպասարկման միջնորդավճարների գանձումը:
բ/ Սույն սակագինը տարածվում է այն քարտային հաշիվների վրա, որոնց քարտի ժամկետը լրացել է, քարտը չի վերաթողարկվել և քարտի ժամկետին նախորդող 365 և ավելի օրվա ընթացքում հաշվով գործարքներ չեն իրականացվել:
գ/ Սույն սակագինը չի տարածվում օրենքով սահմանված կարգով լուծարային գործընթացում գտնվող հաշվետերերի հաշիվների, կալանքի տակ գտնվող բանկային հաշիվների, սոց.փաթեթի, պետ.նպաստի և պետ.աջակցության հաշիվների, ցպահանջ անցած ժամկետային ավանդների վրա և հաճախորդների կենսաթոշակային բանկային և քարտային հաշիվների վրա:

3 ցանկացած ժամանակահատվածի համար

4 4.1.<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ առնվազն 20 օրացուցային օր 3000000 ՀՀ դրամ /կամ համարժեք արտարժույթ/ և ավելի գումարի ժամկետային ավանդ ունեցող ֆիզիկական, նախորդ ամսում բանկային, քարտային և/կամ ժամկետային ավանդի հաշիվների ընդհանուր միջին մնացորդը 10000000 ՀՀ դրամը /կամ համարժեք հարտարժույթը/ գերազանցող իրավաբանական կամ վերջիններիս տնօրեն հանդիսացող ֆիզիկական անձանց, <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ աշխատակիցներին, <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ համակարգում ուսումնաարտադրական պրակտիկա անցած ուսանողներին պրակտիկային վերաբերվող տեղեկանքների, սոթիալական փաթեթի և պետական աջակցության հաշիվների սպասարկման նպատակով տրամադրվող տեղեկանքների համար անվճար:
4.2. նույն օրվա ընթացքում կատարված SWIFT հաղորդագրությունների պատճեների համար՝ անվճար:

5 ա/ Յուրաքանչյուր գործարքից հետո, հաշվից քաղվածքների, վճարային փաստաթղթերի պատճեի և (կամ) կրկնօրինակի տրամադրման, ինչպես նաև մինչև մեկ տարի լրանալը «Mobile/Online Banking» համակարգով կատարված գործարքներից փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրման համար՝ անվճար:
բ/ Մեկ տարուց ավելի «Home Bank», «Mobile/Online Banking» համակարգով կատարված գործարքների փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրման համար գանձվում է 1000 դրամ սակագին:
գ/ Պետական աջակցության և սոցիալական փաթեթի հաշվից քաղվածքների տրամադրումը՝ անվճար:

6 Նախորդ ամսվա ընթացքում կատարված գործարքների համար քաղվածքների և վճարային փաստաթղթերի տրամադրումը անվճար կարող է իրականացվել մինչև հաջորդող ամսվա վերջին բանկային օրը ներառյալ:

7 ա/ԱՄԿ-ների, սոցիալական փաթեթի հաշիվների, պետական աջակցության հաշիվների սպասարկման նպատակով, Մանկական ավանդի և <<Կամավոր կուտակային ավանդի>> համալրման նպատակով՝ անվճար:
բ/Հաշվի տնօրինման հանձնարարականի կատարումից սակագին չի գանձվում, եթե հանձնարարականը կատարվել է 10 օրացուցային օրվա ընթացքում: գ/Հաշվի տնօրինման հանձնարարականի ընթացիկ կատարման համար գանձվում է սակագին, եթե տվյալ ամսում հանձնարարականի կատարում է տեղի ունեցել:

8 ա/Գանձապետարանների սպասարկման նպատակով անվճար:
բ/ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲ Ընկերությունում սպասարկվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից կանխիկ դրամական միջոցների ելքը դրամարկղի ելքի օրդերով իրականացնելու դեպքում գանձվում է 500 ՀՀ դրամ սակագին:

9 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ պատասխանատվություն չի կրում թղթակից բանկի կողմից պատասխան չստանալու համար:

10 Բացառությամբ այն հաճախորդների որոնք համապատասխանում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ-ի կողմից ընդունված «VIP» չափանիշներին:

11 Բացառությամբ կենսաթոշակ ստանալու նպատակով բացված հաշիվների, Անհատ ձեռնարկատերերի կողմից վարկի մարման նպատակով տրված լիազորագրերի և պայմանագրով նախատեսված այլ դեպքերի:

Բանկը հաճախորդի դիմումով բացում է ժամանակավոր, հիմնական, առարկայագուրկ մետաղական հաշիվներ, էսքրոու և կառուցապատողի հատուկ հաշիվներ, ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ հատուկ հաշիվներ.
Ժամանակավոր հաշիվը բացվում է նոր ստեղծվող (գրանցման փուլում գտնվող) իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հաճախորդների համար:
Հիմնական հաշիվները բացվում են ֆիզիկական և գրանցված իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատեր) համար:
Կառուցապատողի հատուկ հաշիվը բացվում է գրանցված իրավաբանական անձանց համար (անհատ ձեռնարկատեր):
Կառուցապատողի հատուկ հաշիվներ բացվում են միայն ՀՀ դրամով, իսկ ժամանակավոր և հիմնական հաշիվները՝ ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:
Հաշվով կարող են իրականացվել հետևյալ գործարքները՝
•հաշվին դրամական միջոցների կանխիկ/անկանխիկ մուտքագրումներ,
•հաշվի դրական մնացորդի սահմաններում դրամական միջոցների կանխիկ տրամադրումներ,
•հաշվի դրական մնացորդի սահմաններում դրամական միջոցների անկանխիկ փոխանցումներ,
•հաճախորդի տարբեր հաշիվների միջև դրամական միջոցների փոխանցումներ,
•համապատասխան տեղեկատվական ամփոփագրերով սահմանված այլ գործառնություններ:
Հաշիվների հեռակառավարում հնարավոր է իրականացնել ONLINE BANKING, MOBILE BANKING համակարգերի միջոցով, որոնց պայմաններին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով.
Հաշվի արժույթից տարբերվող այլ արժույթներով գործառնությունների իրականացման հնարավորություն առկա չէ:
Բանկը պարտավորվում է հաճախորդի հաշվին փոխանցված դրամական միջոցները (անկանխիկ ոսկին) մուտքագրել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթղթերի Բանկ մուտք լինելու հաջորդ օրը:
Բանկը պարտավորվում է հաճախորդի կարգադրությամբ հաշվից դրամական միջոցներ տալ կամ փոխանցել (անկանխիկ ոսկին փոխանցել) ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթղթերի Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, բացառությամբ լիազորագրերի հիման վրա հաշվով գործառնությունների իրականացումը, որը կատարվում է Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների համաձայն լիազորագրի իսկությունը ստուգելուց հետո:
Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա, որից հետո 30 օրացուցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել Հաճախորդին՝ տրամադրելով հաշվի քաղվածք վերջինիս հաղորդակցման եղենակով:
Բանկի նկատմամբ Հաճախորդի դրամական պարտավորությունների կատարման նպատակով Բանկը կարող է անակցեպտ կարգով կատարել հաշվանց, որից հետո 30 օրացուցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել Հաճախորդին՝ տրամադրելով հաշվի քաղվածք վերջինիս հաղորդակցման եղանակով:
Հաշիվը կարող է փակվել հաճախորդի փակման միակողմանի դիմումով կամ Բանկի կողմից միակողմանի՝ հաշվում դրամական միջոցների բացակայության և մեկ տարվա ընթացքում հաշվով գործառնություններ չկատարվելու, Սակագներով սահմանված վճարները, հաճախորդի այլ պարտավորությունները չկատարվելու, ինչպես նաև Պայմաններով սահմանված այլ դեպքերում: Հաշվի փակման դեպքում՝ հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը տրվում է հաճախորդին կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշվի, հաճախորդի համապատասխան գրավոր դիմումն ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում, որից հետո հաշիվը փակվում է:
Պայմանագրից բխող վեճերի առաջացման դեպքում հաճախորդը գրավոր դիմում է բանկին, և 10 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդին տրվում է դիմումի վերաբերյալ պատասխան: Պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում հաճախորդը իրավունք ունի դիմել դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին օրենքով սահմանված կարգով:
Բանկային հաշիվների բացման նվազագույն սկզբնական գումարի սահմանափակում չկա, իսկ վճարվող տոկոսները ենթակա են հարկման Եկամտային հարկի մասին ՀՀ օրենքով սահմանված չափով:
Ֆիզիկական անձ հաճախորդը հաշիվ բացելու համար Բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- անձը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ,
- անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրի գրանցման վկայական կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք և կնիք (հաճախորդի ցանկությամբ) (պահանջվում է միայն անհատ ձեռնարկատիրոջից),
- հարկային կոդ (պահանջվում է միայն անհատ ձեռնարկատիրոջից, եթե այն նշված չէ ՀՀ պետական ռեգիստրի գրանցման վկայականում).
- լուծարվող (անվճարունակության գործընթացում գտնվող) անհատ ձեռնարկատիրոջ հաշիվ բացելու դեպքում Բանկ ներկայացող լուծարային (անվճարունակության գործով) կառավարիչը ներկայացնում է նաև լուծարման և իր նշանակման վերաբերյալ համապատասխան իրավասու մարմնի որոշումը:
- հաշվի (հաշիվների) միջոցները տնօրինելու լիազորված անձի դեպքում՝ լիազորագիր վավերացված նոտարի կողմից կամ սահմանված կարգով տրված Բանկում անձամբ հաճախորդի կողմից :
- կառուցապատողի հատուկ հաշվի բացման համար հաճախորդը Բանկ է ներկայացնում նաև իր կողմից կառուցվող շենքի շինարարության թույլտվության պատճենը (պահանջվում է միայն անհատ ձեռնարկատիրոջից):

Ռեզիդենտ իրավաբանական անձը բանկային հաշիվ բացելու համար պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- տնօրենի անձը հաստատող փաստաթուղթը,
- իրավաբանական անձի պետական ռեգիստրի գրանցման վկայական (նաև գործող ղեկավարի գրանցման ներդիր) և մասնակիցների վերաբերյալ տեղեկանք /Հիմնադրամների, Հասարակական կազմակերպությունների, Հասարակական Միավորումների և այն կազմակերպությունների դեպքում, որոնց մասնակիցների հաշվառումը չի կատարվում որևէ պետական մարմնի կամ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ կանոնների համաձայն՝ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպության կողմից, մասնակիցների վերաբերյալ տեղեկանք՝ տրված տվյալ կազմակերպության գործադիր մարմնի կողմից՝ առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ/, եթե մասնակիցների վերաբերյալ տեղեկությունը (առավելագույնը 30 օրյա

վաղեմությամբ) ներառված չէ կանոնադրությունում) կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք: Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ տեղեկանք (քաղվածք) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ կանոնների համաձայն՝ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպությունից բաժնետերերի վերաբերյալ, ընդ որում.

- մասնակիցների կազմում 20% և ավելի մասնակցություն ունեցող իրավաբանական անձ մասնակից լինելու դեպքում պահանջվում է նաև տվյալ իրավաբանական անձի 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանք, և այդպես, շարունակաբար իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների կազմում իրավաբանական անձ մասնակիցներ լինելու դեպքում պահանջվում է այդ մասնակից իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանք:
- կանոնադրության 1 պատճեն՝ կարված և կնքված ,Իսկականի հետ ճիշտ է մակագրությամբ ,
- հարկային կոդ (եթե այն նշված չէ ՀՀ պետական ռեգիստրի գրանցման վկայականում),
- ստորագրության իրավունքով օժտվող անձանց պաշտոնի ստանձման հրամաններից քաղվածքներ կամ հաստատված պատճեններ:
- Լիազորված անձի կողմից հաշիվ բացելու դեպքում՝ լիազորված անձի լիազորությունները հավաստող լիազորագրի բնօրինակը՝ վավերացված նոտարական կարգով:
- Լուծարվող (անվճարունակության գործընթացում գտնվող) իրավաբանական անձի հաշիվ բացելու դեպքում լուծարային (անվճարունակության գործով) կառավարիչը ներկայացնում է լուծարային կառավարիչ նշանակելու և լուծարման (անվճարունակության) վերաբերյալ համապատասխան իրավասու մարմնի որոշում:
- Կառուցապատողի հատուկ հաշվի բացման համար հաճախորդը Բանկ է ներկայացնում նաև իր կողմից կառուցվող շենքի շինարարության թույլտվության պատճենը:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձը բանկային հաշիվ բացելու համար պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- տնօրենի անձը հաստատող փաստաթուղթը,
- մասնակիցների վերաբերյալ տեղեկանքի (տեղեկատվության) (առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ) բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, եթե մասնակիցների վերաբերյալ տեղեկությունը (առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ) ներառված չէ կանոնադրությունում), ընդ որում.
- մասնակիցների կազմում 20% և ավելի մասնակցություն ունեցող իրավաբանական անձ մասնակից լինելու դեպքում պահանջվում է նաև տվյալ իրավաբանական անձի 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանքի (տեղեկության) բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, և այդպես, շարունակաբար իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների կազմում իրավաբանական անձ մասնակիցներ լինելու դեպքում պահանջվում է այդ մասնակից իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանք (տեղեկություն):
- լիազորված անձի (անձանց) կողմից հաշիվ բացելու դեպքում՝ լիազորված անձի (անձանց) լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,
- ոչ ռեզիդենտի երկրի իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից իրավաբանական անձի գրանցումն հավաստող փաստաթղթի բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,
- ոչ ռեզիդենտի երկրի իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից իրավաբանական անձի ղեկավարի գրանցման և իրավասության մասին փաստաթղթի բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, իրավաբանական անձի ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի պատճենը՝ վավերացված նոտարական կարգով,
- ոչ ռեզիդենտի հիմնադիր փաստաթղթերի (կանոնադրություն, հիմնադիր պայմանագիր և այլն) բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է „Ճանաչիր քո հաճախորդին„ (Know your customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ հաճախորդին:

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել հաճախորդից լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Ելնելով տարաբնույթ հանգամանքներից՝ կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և պարբերականությամբ ֆիզիկական անձ հաշվետիրոջը տրամադրում է վերջինիս նախընտրած լեզվով իր հաշվի վերաբերյալ քաղվածք, բացառությամբ այն դեպքի, երբ հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հաշիվը չի դեբետագրվել կամ կրեդիտագրվել:

Բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների համար, եթե վճարային քարտերով սպասարկվող հաշիվների տեղեկատվական ամփոփագրերով այլ տոկոսի չափ չի սահմանվել, հաշվարկվում է տարեկան տոկոսադրույք[1].

Տարեկան անվանական տոկոսադրույքի դեպքում՝

ՀՀ դրամ	Տոկոսադրույք
ա/ 0-ից 20 000 000	0%
բ/ 20 000 001-50 000 000	1%
գ/ 50 000 001 և ավելի	2%

Հաշվարկներում տարին ընդունվում է 365 օր, նահանջ տարվա համար 366 օր

Տարեկան տոկոսային եկամտաբերության դեպքում*.

ՀՀ դրամ	Տոկոսադրույք
ա/ 0-ից 20 000 000	0.00%
բ/ 20 000 001-50 000 000	1.00%
գ/ 50 000 001 և ավելի	2.02%

տոկոսադրույքները հաշվարկվում են՝ տարին ընդունելով 365 օր

*Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$APY = (1 + r / n)^n - 1$$

որտեղ՝

1) APY – տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:
2) r – տարեկան պարզ տոկոսադրույքն է:
3) n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

1. Տոկոսները հաշվարկվում են հաշվետու ամսվա ընթացքում բանկային հաշվում առկա դրամական միջոցների միջին օրական կտրվածքով և վճարվում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը:

Ընդ որում՝

* եթե բանկային հաշիվը բացվել է և/կամ հաշվին միջոցները գոյացել են հաշվետու ամսվա ընթացքում՝ ապա միջին օրական տոկոսների հաշվարկն իրականացվում է հաշվետու ամսվա օրացուցային օրերի հաշվարկով,
* եթե հաշվետու ամսվա ընթացքում բանկային հաշիվը փակվել է՝ ապա այդ ամսվա համար տոկոսներ չեն վճարվում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ՝ www.aeb.am :

Բանկն իրավունք ունի միակողմանի փոփոխել վճարվող տոկոսադրույքը:

Հաշվարկի օրինակ՝

ՀՀ դրամ

տարեկան 1.0% տոկոսադրույք		տարեկան 2.0% տոկոսադրույք	
ամսվա միջին օրական մնացորդ	ստացվելիք տոկոսներ (31 օրում)	ամսվա միջին օրական մնացորդ	ստացվելիք տոկոսներ (31 օրում)
25,000,000.00	19,109.50	60,000,000.00	91,726.00

Հաշվարկներում տարին ընդունվել է 365 օր, ընդ որում տոկոսագումարները հաշվարկված են՝ հաշվի առած եկամտային հարկը:

Ավանդները երաշխավորվում են Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի համաձայն.

Ավանդի արժութային կառուցվածքը		**Ավանդի երաշխավորման առավելագույն չափը**
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		**16 միլիոն ՀՀ դրամ**
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ		**7 միլիոն ՀՀ դրամ**
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	**16 միլիոն ՀՀ դրամ**[1]
	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է	**7 միլիոն ՀՀ դրամ**[2]

1. Երաշխավորվում է միայն դրամային ավանդը:
2. Երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով:

II. ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄՈՎ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ԿՈՄԻՍԻՈՆ ՎՃԱՐ
1. Կանխիկ միջոցների մուտքագրում	
ա/ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո	0
բ/ Այլ արտարժույթ,այդ թվում քարտային հաշիվներին մուտքագրում	օրվա սահմանված տոկոսադրույքով[6]
գ/ չեկերի գնման, վճարահաշվարկային համակարգերով, ավանդային հաշիվներին մուտքերի, ինչպես նաև արտարժույթի կանխիկ առք ու վաճառքի գործարքների նպատակով	0
դ/ Հաճախորդների կողմից հատուկ ընթացակարգով /համարակալված կապարակնիքներով կնքված կամ մեկանգամյա օգտագործման համարակալված պոլիէթիլենային պարկերով/ կանխիկ գումարների մուտքագրում ելնելով գումարի ծավալից	0,01% min 500 դրամ
2. Հաճախորդի հաշվին մուտքագրված կանխիկ միջոցներից՝ կանխիկի վճարում[1]	
ա/ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո	0
բ/ Այլ արտարժույթ	օրվա սահմանված տոկոսադրույքով
3.Կանխիկ միջոցների վճարում՝ հաճախորդի անկանխիկ միջոցներից[2]	
Ֆիզիկական անձանց համար	
ա/ մինչև 30 000 դրամ	500 դրամ

բ/ 30 001 դրամ և ավելի	0.5 %, min 1 000 դրամ
գ/ԱՄՆ դոլար	2 % min 1000 դրամ
դ/ ԵՎՐՈ	1.5 %, min 1 000 դրամ
ե/ Այլ արտարժույթ	օրվա սահմանված տոկոսադրույքով
Իրավաբանական անձանց,ԱՁ-ի համար	
ա/ մինչև 30 000 դրամ	500 դրամ
բ/ 30 001 դրամ և ավելի	0.3%, min 1 000 դրամ
գ/ԱՄՆ դոլար	2 % min 1000 դրամ
դ/ ԵՎՐՈ	1.5 % min 1 000 դրամ
ե/ Այլ արտարժույթ	օրվա սահմանված տոկոսադրույքով
3.1 Ոչ հաշվետեր հանդիսացող անձանց համար և տարանցիկ հաշիվներից [5]	
ա/ մինչև 30 000 դրամ	500 դրամ
բ/ 30 001-100 000 դրամ	1000 դրամ
գ/100 001 դրամ և ավել	1%, min 3000 դրամ
դ/ ԵՎՐՈ	1.5% min 1000դրամ
ե/ԱՄՆ դոլար	2% min 1000դրամ
4.Հնամաշ և վնասված դրամանիշերի փոխանակում	
ա/ ՀՀ դրամ	0
բ/ ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ և ՌԴ ռուբլի	5%
գ/ Այլ արտարժույթ	չի ընդունվում
5. Կանխիկ արտարժույթի իսկության ստուգում * [3]	
ա/ մինչև 600 000 դրամին համարժեք արտարժույթ	5 000 դրամ
բ/ 600 001-ից 1 000 000 դրամին համարժեք արտարժույթ	10 000 դրամ
գ/ 1 000 001-ից 5 000 000 դրամին համարժեք արտարժույթ	15 000 դրամ
դ/ 5 000 001-ից 10 000 000 դրամին համարժեք արտարժույթ	20 000 դրամ
ե/ 10 000 001 դրամին համարժեք արտարժույթ և ավելի	30 000 դրամ
6. Մետաղադրամների ընդունում մեկ հաճախորդից՝ մեկ բանկային օրվա ընթացքում [4]	
ա/ մինչև 50 000 դրամ	0
բ/ 50 001 և ավելի դրամ	2%

*Սակագինը ներառում է ԱԱՀ-ն

1 Հաճախորդների հաշիվներից միջոցների կանխիկացման միջնորդավճարը հաշվարկելիս հիմք է ընդունվում միջոցների կանխիկացման օրվան նախորդող 182 օրվա ընթացքում հաճախորդի հաշվին <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ համակարգում կանխիկ մուտքագրված և կանխիկ ելքագրված գումարների հանրագումարների տարբերությունը (սույն սակագինը չի տարածվում մանկական ավանդների, ֆիզիկական անձանց կողմից ներդրված ժամկետային ավանդների և դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների վրա): Բանկի կողմից տրամադրված վարկերը (բացառությամբ ֆիզիկական անձանց տրամադրված ոսկյա իրերի և դրամական միջոցների գրավադրմամբ վարկերի, ինչպես նաև բանկի աշխատակիցներին ՀՀ դրամով տրամադրված վարկերի, Արարատինկասացիայի աշխատակիցներին աշխատավարձից մարման պայմանով տրամադրված վարկերի, որոնց համար կանխիկացման սակագին չի գանձվում) ,տերմինալների միջոցով հաշիվներին մուտքագրված միջոցները համարվում են հաճախորդի հաշվին մուտքագրված անկանխիկ միջոցներ:

2 ա/ Սույն սակագինը չի տարածվում մանկական ավանդների, բանկային ցպահանջ ավանդային հաշիվներին վճարված տոկոսագումարների, ֆիզիկական անձանց կողմից ներդրված ժամկետային ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսների, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերը ձեռքբերած ֆիզիկական անձ հաճախորդներից ներդրումային ծառայությունների դիմաց գանձվող միջնորդավճարների (ներառյալ բորսայական սակագները) և պարտատոմսերի հետ գործարքների արդյունքում մուտքագրված դրամական միջոցների , ֆիզիկական անձանց տրամադրված ոսկյա իրերի գրավադրմամբ և դրամական միջոցների գրավադրմամբ վարկերի, բանկի աշխատակիցներին ՀՀ դրամով տրամադրված վարկերի և Արարատինկասացիայի աշխատակիցներին աշխատավարձի ապահովմամբ տրամադրված վարկերի, ինչպես նաև «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից տեղադրված POS տերմինալներով իրականացված գործարքներից առաջացած անկախիկ միջոցների կանխիկացման վրա:

բ/ սույն սակագինը չի տարածվում իրավաբանական անձ հանդիսացող հաճաղորդների կողմից բանկի համապատասխան բազայի միջոցով տվյալ օրվա ընթացքում վճարված կոմունալ վճարների նպատակով կանխիկացվող գումարների վրա:

գ/ Բարեգործական կազմակերպությունների համար անվճար:Սույն սակագինը չի տարածվում այլ արտարժույթի վրա:
դ/ Սույն սակագինը չի տարածվում սոցիալական փաթեթի հաշիվներից, սոցիալական ապահովության հաշիվներից և պետ.նպաստի հաշիվներին որպես նպաստ փոխանցված գումարների կանխիկացման վրա:
ե/Այն վարկատեսակների համար,որոնց տրամադրման ժամանակ նախատեսված է կանխիկացման սակագին, նվազագույն 1000 ՀՀ դրամի շեմը չկիրառել :

3 Սույն սակագինը չի տարածվում բանկում արտարժույթով որևէ գործարքի կատարման վրա: Քաղաքացու կողմից ներկայացված կանխիկ արտարժույթի իսկությունը ստուգվում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ գանձապահի կողմից, սահմանված կարգով փաթեթավորվում, դրոշմվում և վերադարձվում հաճախորդին:

4 Սահմանված միջնորդավճարը չի տարածվում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում գործող հաշիվներ ունեցող հաճախորդների վրա և «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում գործող հաշիվներին մուտքագրման ժամանակ:

5 Սույն սակագինը չի տարածվում բանկում կանխիկ վճարված և հետ վերադարձված գումարների կանխիկացման վրա:
6 Բացառությամբ բանկային հաշիվներին ՌԴ ռուբլի արժույթով ավանդների ներգրավման նպատակով կանխիկ միջոցների մուտքագրման:

III. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ[1]

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ԿՈՄԻՍԻՈՆ ՎՃԱՐ
1. ՀՀ Դրամով[2]	0
1.1 Առանց հաշիվ բացելու կանխիկ ՀՀ դրամով փոխանցումների /վճարումների/ սպասարկում [3]	
ա/ մինչև 100 000 դրամ	200 ՀՀ դրամ
բ/ 100 001-ից 500 000 դրամ	500 ՀՀ դրամ
գ/ 500 001-ից 1 000 000 դրամ	1,000 ՀՀ դրամ
դ/ 1 000 001-ից 3 000 000 դրամ	1,500 ՀՀ դրամ
ե/ 3 000 001-ից 5 000 000 դրամ	3,000 ՀՀ դրամ
զ/ 5 000 001 և ավելի դրամ	5,000 ՀՀ դրամ
է/ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ համակարգում	Անվճար
1.2 Արտարժույթով ներբանկային փոխանցումներ /վճարումներ/	Անվճար
1.3 Ներբանկային փոխանցումներ /ՀԷԲ փոխանցումներ գաղտնաբառով/	0.6% min 200 դրամ
1.4 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ ապառիկ վարկերի 1000 ՀՀ դրամը գերազանցող կանխիկ վճարումների իրականացում	300 ՀՀ դրամ
3. ԱՄՆ դոլարով և ԵՎՐՈ արժույթներով Հայաստանի Հանրապետության տարածքում	–
ա/ մինչև 20,000 ԱՄՆ դոլար կամ 20,000 Եվրո	5000 դրամ
բ/ 20,001 և ավելի ԱՄՆ դոլար կամ Եվրո	10 000 դրամ

գ/դեպոնացման նպատակով ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ ԲԲԸ և «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված դոլարային պարտատոմսերի գծով ԱՄՆ դոլարով վճարվող տոկոսների և մարման արդյունքում առաջացած գումարների փոխանցումների դեպքում	անվճար
4. Կատարված փոխանցումների[4] պայմանների փոփոխում, չեղյալացում	
Կատարված փոխանցումները չեն կարող չեղյալացվել, եթե գումարի շահառուն (ստացողը) հրաժարվի փոխանցված գումարը ետ վերադարձնելուց	
ա/ ՀՀ դրամ	2 000 դրամ
բ/ ներբանկային («ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համակարգում) փոխանցումների պայմանների փոփոխում և/կամ չեղյալացում	**անվճար**

*Սակագինը ներառում է ԱԱՀ-ն

1.ա/ ՀՀ տարածքում փոխանցումները կատարվում են ոչ ուշ, քան հաջորդ բանկային օրը:
բ/ ՀՀ տարածքում փոխանցումների դեպքում՝ պայմանների փոփոխումը և/կամ չեղյալացումը իրականացվում է 3-5 աշխատանքային օրվա ընթացքում (բացառությամբ պետական և տեղական բյուջե կատարված վճարումների): Կատարված փոխանցումները չեն կարող չեղյալացվել, եթե գումարի շահառուն (ստացողը) հրաժարվի փոխանցված գումարը ետ վերադարձնելուց:
2 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համակարգում հաճախորդների բանկային հաշիվներից ՀՀ տարածքում անկանխիկ ՀՀ դրամով փոխանցումների կատարման ժամանակ առանց հաճախորդի կողմից վճարման հանձնարարականի ներկայացման, կատարված յուրաքանչյուր փոխանցման համար գանձվում է 100 ՀՀ դրամ սակագին (բացառությամբ տեխնիկական զննության կտրոնների տրամադրման համար, սոցիալական փաթեթի և պետական աջակցության հաշիվների սպասարկման նպատակով և ժամկետային ավանդների ներգրավման համար վճարման հանձնարարականների):
3 ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին օրենքի համաձայն ստեղծված Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի նվիրաբերությունների թիվ 103008661003 հաշվին և դրոշմանիշային վճարների թիվ 900005001186 հաշվին կանխիկ ՀՀ դրամով փոխանցումները իրականացվում են անվճար:
4.«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ թղթակցային հաշիվներից ելքագրված փոխանցումներ:
Եթե փոխանցումը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ից դուրս չի եկել, ապա պայմանների փոփոխման/ չեղյալացման սակագինը չի գանձվում:

IV. ԱՌԱՐԿԱՅԱՁՈՒՐԿ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՇԻՎ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ԿՈՄԻՍԻՈՆ ՎՃԱՐ
1. Տարեկան սպասարկման վարձ	5 000 դրամ[1]
2. Նվազագույն մուտք / Հաշվով գործարքի նվազագույն չափ	1 գր
3. Հաշվին առկա միջոցների դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույք	0%
4. Փոխանցումներ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համակարգից դուրս	փոխանցվող մետաղի քանակության գործարքի կատարման պահի դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքով հաշվարկված գումարի 0.1% min 15 000 դրամ

5. Փոխանցումներ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համակարգում	0
6. Փոխանցված գումարների մուտքագրում հաշվին	5 000 դրամ

1.Մետաղական հաշվից տարեկան սպասարկման վճար չի գանձվում, եթե հաշվի մնացորդը զրո է:

Առարկայազուրկ մետաղական հաշիվները բացվում են ֆիզիկական և գրանցված իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատեր) համար:

Առարկայազուրկ մետաղական հաշիվը ցպահանջ հաշիվ է՝ նախատեսված անկանխիկ ոսկու հաշվառման համար, որը բացվում է միայն 999.9 հարգով և որով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները.

- մետաղական հաշվի համալրում՝ Բանկից անկանխիկ ոսկի գնելու և այն մետաղական հաշվին մուտքագրելու միջոցով, ինչպես նաև հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ բանկում առկա մետաղական հաշվից ոսկու անկանխիկ փոխանցման միջոցով,
- մետաղական հաշվի ելքագրում՝ մետաղական հաշվում առկա անկանխիկ ոսկին Բանկին վաճառելու միջոցով, ինչպես նաև հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ բանկում առկա մետաղական հաշվին ոսկու անկանխիկ փոխանցում կատարելու միջոցով:

Հաշվով գործառնությունների իրականացման ժամանակ հիմք են ընդունվում Բանկի կողմից սահմանված 1 գրամ անկանխիկ ոսկու առքի և վաճառքի փոխարժեքները:

Առարկայազուրկ մետաղական հաշվով գործառնությունները չեն ենթադրում ոսկու կանխիկ մուտքագրում և ելքագրում:

Առարկայազուրկ մետաղական հաշիվները չեն հատուցվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Բանկը պարտավորվում է հաճախորդի հաշվին փոխանցված դրամական միջոցները (անկանխիկ ոսկին) մուտքագրել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթղթերի Բանկ մուտք լինելու հաջորդ օրը:

Բանկը պարտավորվում է հաճախորդի կարգադրությամբ հաշվից դրամական միջոցներ տալ կամ փոխանցել (անկանխիկ ոսկին փոխանցել) ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթղթերի Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, բացառությամբ լիազորագրերի հիման վրա հաշվով գործառնությունների իրականացումը, որը կատարվում է Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների համաձայն լիազորագրի իսկությունը ստուգելուց հետո:

Ֆիզիկական անձ/անհատ ձեռնարկատեր հաճախորդը հաշիվ բացելու համար Բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- անձը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ,
- անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրի գրանցման վկայական կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք և կնիք (հաճախորդի ցանկությամբ) (պահանջվում է միայն անհատ ձեռնարկատիրոջից),
- հարկային կոդ (պահանջվում է միայն անհատ ձեռնարկատիրոջից, եթե այն նշված չէ ՀՀ պետական ռեգիստրի գրանցման վկայականում).
- հաշվի (հաշիվների) միջոցները տնօրինելու լիազորված անձի դեպքում՝ լիազորագիր վավերացված նոտարի կողմից կամ սահմանված կարգով տրված Բանկում անձամբ հաճախորդի կողմից :

Ռեզիդենտ իրավաբանական անձը հաշիվ բացելու համար պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- տնօրենի անձը հաստատող փաստաթուղթը,
- իրավաբանական անձի պետական ռեգիստրի գրանցման վկայական (նաև գործող ղեկավարի գրանցման ներդիր) և մասնակիցների վերաբերյալ տեղեկանք /Հիմնադրամների, Հասարակական կազմակերպությունների, Հասարակական Միավորումների և այն կազմակերպությունների դեպքում, որոնց մասնակիցների հաշվառումը չի կատարվում որևէ պետական մարմնի կամ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ կանոնների համաձայն՝ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպության կողմից, մասնակիցների վերաբերյալ տեղեկանք՝ տրված տվյալ կազմակերպության գործադիր մարմնի կողմից՝ առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ/, եթե մասնակիցների վերաբերյալ տեղեկությունը (առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ) ներառված չէ կանոնադրությունում) կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք: Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ տեղեկանք (քաղվածք) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ կանոնների համաձայն՝ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպությունից բաժնետերերի վերաբերյալ, ընդ որում.
- մասնակիցների կազմում 20% և ավելի մասնակցություն ունեցող իրավաբանական անձ մասնակից լինելու դեպքում պահանջվում է նաև տվյալ իրավաբանական անձի 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանք, և այդպես, շարունակաբար իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների կազմում իրավաբանական անձ մասնակիցներ լինելու դեպքում պահանջվում է այդ մասնակից իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանք:
- կանոնադրության 1 պատճեն՝ կարված և կնքված .Իսկականի հետ ճիշտ է մակագրությամբ ,
- հարկային կոդ (եթե այն նշված չէ ՀՀ պետական ռեգիստրի գրանցման վկայականում),
- ստորագրության իրավունքով օժտվող անձանց պաշտոնի ստանձման հրամաններից քաղվածքներ կամ հաստատված պատճեններ:
- Լիազորված անձի կողմից հաշիվ բացելու դեպքում՝ լիազորված անձի լիազորությունները հավաստող լիազորագրի բնօրինակը՝ վավերացված նոտարական կարգով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձը հաշիվ բացելու համար պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- տնօրենի անձը հաստատող փաստաթուղթը,
- մասնակիցների վերաբերյալ տեղեկանքի (տեղեկատվության) (առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ) բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, եթե մասնակիցների վերաբերյալ տեղեկությունը (առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ) ներառված չէ կանոնադրությունում), ընդ որում.
- մասնակիցների կազմում 20% և ավելի մասնակցություն ունեցող իրավաբանական անձ մասնակից լինելու դեպքում պահանջվում է նաև տվյալ իրավաբանական անձի 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանքի (տեղեկության) բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, և այդպես, շարունակաբար իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների կազմում իրավաբանական անձ մասնակիցներ լինելու դեպքում պահանջվում է այդ մասնակից իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանք (տեղեկություն):
- լիազորված անձի (անձանց) կողմից հաշիվ բացելու դեպքում՝ լիազորված անձի (անձանց) լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,
- ոչ ռեզիդենտի երկրի իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից իրավաբանական անձի գրանցումն հավաստող փաստաթղթի բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,
- ոչ ռեզիդենտի երկրի իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից իրավաբանական անձի ղեկավարի գրանցման և իրավասության մասին փաստաթղթի բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, իրավաբանական անձի ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի պատճենը՝ վավերացված նոտարական կարգով,
- ոչ ռեզիդենտի հիմնադիր փաստաթղթերի (կանոնադրություն, հիմնադիր պայմանագիր և այլն) բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է ,,Ճանաչիր քո հաճախորդին,, (Know your customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ հաճախորդին:

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել հաճախորդից լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Ելնելով տարաբնույթ հանգամանքներից՝ կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Հաշիվը կարող է փակվել հաճախորդի փակման միակողմանի դիմումով կամ Բանկի կողմից միակողմանի՝ միջոցների բացակայության և մեկ տարվա ընթացքում հաշվով գործառնություններ չկատարվելու, Սակագներով սահմանված վճարները, հաճախորդի այլ պարտավորությունները չկատարվելու, ինչպես նաև Պայմաններով սահմանված այլ դեպքերում: Հաշվի փակման դեպքում՝ մետաղական հաշվում առկա անկանխիկ ոսկին հաճախորդի ցուցումով վաճառվում է Բանկին կամ փոխանցվում այլ անկանխիկ ոսկու հաշվի, հաճախորդի համապատասխան գրավոր դիմումն ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում, որից հետո հաշիվը փակվում է:

Առարկայազուրկ մետաղական հաշվի և դրանով կատարված գործառնությունների վերաբերյալ քաղվածքները, վճարային փաստաթղթերի պատճենները և/կամ կրկնօրինակները, այլ տեղեկություններն ու տեղեկանքները տրամադրվում են Հիմնական բանկային հաշվի համար սահմանված սակագներով:

Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա, որից հետո 30 օրացուցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել Հաճախորդին՝ տրամադրելով հաշվի քաղվածք վերջինիս հաղորդակցման եղենակով:

Բանկի նկատմամբ Հաճախորդի դրամական պարտավորությունների կատարման նպատակով Բանկը կարող է անակցեպտ կարգով կատարել հաշվանց, որից հետո 30 օրացուցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել Հաճախորդին՝ տրամադրելով հաշվի քաղվածք վերջինիս հաղորդակցման եղանակով:

V. ԷՍՔՐՈՈՒ ՀԱՇԻՎ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ԿՈՄԻՍԻՈՆ ՎՃԱՐ
1. Սպասարկման վարձատրություն	գործարքի գումարի 0.1% min 15 000 դրամ max 100 000 դրամ
2. Պայմանագրում պայմանների փոփոխություն	15 000 դրամ
3. Հաշվին առկա միջոցների դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույք	0%

Էսքրոու հաշվի վրա դեպոնացվում են գործարքի կատարման համար էսքրոու միջոցների հասցեատիրոջը վճարման ենթակա էսքրոու միջոցներ մուտքագրողի կողմից մուտք արված գումարները (էսքրոու միջոցները)՝ որպես գործարքի կատարման երաշխիք: Էսքրոու հաշվին մուտքագրված էսքրոու միջոցները Բանկը (Էսքրոու գործակալը) Էսքրոու պայմանագրով սահմանված կարգով կարող է վճարել էսքրոու միջոցների հասցեատիրոջը կանխիկ կամ փոխանցվել նրա նշած հաշվին՝ Էսքրոու՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Էսքրոու պայմանագրով սահմանված փաստաթուղթը Բանկին (Էսքրոու գործակալին) ներկայացնելու դեպքում կամ էսքրոու միջոցներ մուտքագրողի կողմից Բանկին (Էսքրոու գործակալին) էսքրոու միջոցները էսքրոու միջոցների հասցեատիրոջը վճարելու վերաբերյալ գրավոր հանձնարարական տրամադրելու դեպքում:
Էսքրոու պայմանագրով սահմանված ժամկետներում Էսքրոու պայմանագրով սահմանված փաստաթուղթը Բանկին չներկայացնելու դեպքու էսքրոու հաշիվը ձևակերպվում է որպես էսքրոու միջոցները մուտքգրողի հիմնական բանկային հաշիվ՝ վերջինիս կողմից այդ հաշվի միջոցները տնօրինելու իրավունքով:
Էսքրու միջոցները էսքրոու հաշվից ելքագրելուց /հաշվի մնացորդը զրոյական դառնալուց/ հետո հաշիվը փակվում է:
Էսքրոու հաշիվները բացվում են ֆիզիկական և գրանցված իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատեր) համար:
Էսքրոու հաշիվներ բացվում են միայն ՀՀ դրամով:
Հաշվի արժույթից տարբերվող այլ արժույթներով գործառնությունների իրականացման հնարավորություն առկա չէ:
Բանկը պարտավորվում է հաճախորդի հաշվին փոխանցված դրամական միջոցները մուտքագրել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթղթերի Բանկ մուտք լինելու հաջորդ օրը:
Բանկը պարտավորվում է հաճախորդի կարգադրությամբ հաշվից դրամական միջոցներ տալ կամ փոխանցել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթղթերի Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, բացառությամբ լիազորագրերի հիման վրա հաշվով գործառնությունների իրականացումը, որը կատարվում է Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների համաձայն լիազորագրի իսկությունը ստուգելուց հետո:
Ֆիզիկական անձ/անհատ ձեռնարկատեր հաճախորդը հաշիվ բացելու համար Բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- անձը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ,
- անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրի գրանցման վկայական կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք և կնիք (հաճախորդի ցանկությամբ) (պահանջվում է միայն անհատ ձեռնարկատիրոջից),
- հարկային կոդ (պահանջվում է միայն անհատ ձեռնարկատիրոջից, եթե այն նշված չէ ՀՀ պետական ռեգիստրի գրանցման վկայականում).
- հաշվի (հաշիվների) միջոցները տնօրինելու լիազորված անձի դեպքում՝ լիազորագիր վավերացված նոտարի կողմից կամ սահմանված կարգով տրված Բանկում անձամբ հաճախորդի կողմից :

Ռեզիդենտ իրավաբանական անձը բանկային հաշիվ բացելու համար պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- տնօրենի անձը հաստատող փաստաթուղթը,
- իրավաբանական անձի պետական ռեգիստրի գրանցման վկայական (նաև գործող ղեկավարի գրանցման ներդիր) և մասնակիցների վերաբերյալ տեղեկանք /Հիմնադրամների, Հասարակական կազմակերպությունների, Հասարակական Միավորումների և այն կազմակերպությունների դեպքում, որոնց մասնակիցների հաշվառումը չի կատարվում որևէ պետական մարմնի կամ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ կանոնների համաձայն՝ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպության կողմից, մասնակիցների վերաբերյալ տեղեկանք՝ տրված տվյալ կազմակերպության գործադիր մարմնի կողմից՝ առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ/, եթե մասնակիցների վերաբերյալ տեղեկությունը (առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ) ներառված չէ կանոնադրությունում) կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք: Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ տեղեկանք (քաղվածք) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ կանոնների համաձայն՝ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպությունից բաժնետերերի վերաբերյալ, ընդ որում.
- մասնակիցների կազմում 20% և ավելի մասնակցություն ունեցող իրավաբանական անձ մասնակից լինելու դեպքում պահանջվում է նաև տվյալ իրավաբանական անձի 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանք, և այդպես, շարունակաբար իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների կազմում իրավաբանական անձ մասնակիցներ լինելու դեպքում պահանջվում է այդ մասնակից իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանք:
- կանոնադրության 1 պատճեն՝ կարված և կնքված .Իսկականի հետ ճիշտ է մակագրությամբ ,
- հարկային կոդ (եթե այն նշված չէ ՀՀ պետական ռեգիստրի գրանցման վկայականում),
- ստորագրության իրավունքով օժտվող անձանց պաշտոնի ստանձման հրամաններից քաղվածքներ կամ հաստատված պատճեններ:
- Լիազորված անձի կողմից հաշիվ բացելու դեպքում՝ լիազորված անձի լիազորությունները հավաստող լիազորագրի բնօրինակը՝ վավերացված նոտարական կարգով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձը հաշիվ բացելու համար պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- տնօրենի անձը հաստատող փաստաթուղթը,
- մասնակիցների վերաբերյալ տեղեկանքի (տեղեկատվության) (առավելագույնը 30 օրյա

վաղեմությամբ) բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, եթե մասնակիցների վերաբերյալ տեղեկությունը (առավելագույնը 30 օրյա վաղեմությամբ) ներառված չէ կանոնադրությունում), ընդ որում.

- մասնակիցների կազմում 20% և ավելի մասնակցություն ունեցող իրավաբանական անձ մասնակից լինելու դեպքում պահանջվում է նաև տվյալ իրավաբանական անձի 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանքի (տեղեկության) բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, և այդպես, շարունակաբար իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների կազմում իրավաբանական անձ մասնակիցներ լինելու դեպքում պահանջվում է այդ մասնակից իրավաբանական անձանց 20% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկանք (տեղեկություն):
- լիազորված անձի (անձանց) կողմից հաշիվ բացելու դեպքում՝ լիազորված անձի (անձանց) լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,
- ոչ ռեզիդենտի երկրի իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից իրավաբանական անձի գրանցումն հավաստող փաստաթղթի բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,
- ոչ ռեզիդենտի երկրի իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից իրավաբանական անձի ղեկավարի գրանցման և իրավասության մասին փաստաթղթի բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը, իրավաբանական անձի ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի պատճենը՝ վավերացված նոտարական կարգով,
- ոչ ռեզիդենտի հիմնադիր փաստաթղթերի (կանոնադրություն, հիմնադիր պայմանագիր և այլն) բնօրինակի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է ,,Ճանաչիր քո հաճախորդին,, (Know your customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ հաճախորդին:

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել հաճախորդից լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Ելնելով տարաբնույթ հանգամանքներից՝ կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն :

Էսքրոու հաշվի և դրանով կատարված գործառնությունների վերաբերյալ քաղվածքները, վճարային փաստաթղթերի պատճենները և/կամ կրկնօրինակները, այլ տեղեկություններն ու տեղեկանքները տրամադրվում են Հիմնական բանկային հաշվի համար սահմանված սակագներով:

Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա՝ բացառությամբ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված դեպքերի:

Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա՝ բացառությամբ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված դեպքերի, որից հետո 30 օրացուցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել Հաճախորդին՝ տրամադրելով հաշվի քաղվածք վերջինիս հաղորդակցման եղենակով:

Բանկի նկատմամբ Հաճախորդի դրամական պարտավորությունների կատարման նպատակով Բանկը կարող է անակցեպտ կարգով կատարել հաշվանց, որից հետո 30 օրացուցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել Հաճախորդին՝ տրամադրելով հաշվի քաղվածք վերջինիս հաղորդակցման եղանակով:

Էսքրոու հաշվի միջոցները երաշխավորվում են Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի համաձայն.

Ավանդի արժութային կառուցվածքը		Ավանդի երաշխավորման առավելագույն չափը
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		**16 միլիոն ՀՀ դրամ**
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ		**7 միլիոն ՀՀ դրամ**
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	**16 միլիոն ՀՀ դրամ**[1]
	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է	**7 միլիոն ՀՀ դրամ**[2]

1. Երաշխավորվում է միայն դրամային ավանդը:
2. Երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով:

VI. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻՆ ԱՌԿԱ ՅՊԱՀԱՆՋ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ[1]

1. ՀՀ դրամով միջոցների դիմաց	
ա/ 0-ից 20 000 000 ՀՀ դրամ	0%
գ/ 20 000 001-ից 50 000 000 ՀՀ դրամ	1%
դ/ 50 000 001-ից ավել	2%
2. Սոցիալական փաթեթի սպասարկման նպատակով բացված հաշվի միջոցների դիմաց	0.1%
3. Պետական աջակցության հաշվի միջոցների դիմաց	5%
4.Էսքրոու հաշիվ	0%
5.Առարկայազուրկ մետաղական հաշիվ	0%

1.Տոկոսները հաշվարկվում են հաշվետու ամսվա ընթացքում բանկային հաշվում առկա դրամական միջոցների միջին օրական կտրվածքով և վճարվում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը: Ընդ որում.
* եթե բանկային հաշիվը բացվել է և/կամ հաշվին միջոցները գոյացել են հաշվետու ամսվա ընթացքում՝ ապա միջին օրական տոկոսների հաշվարկն իրականացվում է հաշվետու ամսվա օրացուցային օրերի հաշվարկով,
* եթե հաշվետու ամսվա ընթացքում բանկային հաշիվը փակվել է՝ ապա այդ ամսվա համար տոկոսներ չեն վճարվում:

Բանկային ծառայությունների մատուցման կարգը, ձևը, ընդհանուր պահանջները սահմանվում են Բանկի Վարչության կողմից հաստատվող՝ << <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ>>ով, որին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով:

«ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ»:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՁԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»: